ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի
Հանրապետության Արմավիրի
մարզի Ջրարբի համայնք, ՀՀ, Արմավիրի
մարզ, գ. Ջրարբի ,

N 211
09 դեկտեմբեր 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2020թվականի նոյեմբերի 20-ի N- 48-Ն որոշման ուղղված տարբերակը՝ պահպանելով <<Նորմատիվ իրավական ակտի մասին>> օրենքի դրույթները:

ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. Վարդանյան

093-17-18-72

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ջրարբի

<<20>> <<նոյեմբերի>> 2020թ. **N 48 - Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N77-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2020 թվականի հոկտեմբերի 29-ի N06/27.4/24177 գրությամբ ներկայացված փորձագիտական եզրակացությունը՝

Ջրարբի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի <<2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N77-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ *Կողմ -5* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱԶԱՏ

ԲԱԲԱՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻՆԱ

ՓԱԼԱՆԴՈՒՋՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու
2020 թվականի <<նոյեմբերի>> <<20>>-ի N 48 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N77-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքի բյուջե <<Արաքս թ/ֆ>> ՓԲԸ-ի կողմից փոխանցված նվիրատվության 24000.0 դրամ գումարը, որը նախատեսված է ասֆալտապատման աշխատանքների համար, պլանավորել որպես եկամուտ և նախատեսել համապատասխան հոդվածին.
2. համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից՝ 7621.0 հազար դրամից պակասեցնել 6500.0 հազար դրամ, որից 6000.0 դրամը հատկացնել ֆոնդային բյուջե՝ ասֆալտապատման աշխատանքների համար.
3. 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածն ավելացնել 500.0 հազար դրամով.
4. 04 բաժնի 5-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածն ավելացնել 30000.0 հազար դրամով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Երևան Մարգսյան 378 , հեռ. 594015
էլ. փոստ suren.galstyan@justice.am

06/27.4/24177
29.10 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՋՐԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղազարյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 175 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

10/29/2020

Suren Galstyan

Signed by: GALSTYAN SUREN 1111911555

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Արաքսյա Առաքելյան
Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 59-41-23

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 77-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրարբի համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) անվանման մեջ անհրաժեշտ է նշել իրավական ակտի ընդունող մարմնի անվանման, տեսակի, բնույթի և ընդունման տարվա ու ամսվա վերաբերյալ դրույթներ: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի դրույթներից:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով նախատեսվում է կատարել համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն, անհրաժեշտ է համապատասխան փոփոխությունները կատարել համայնքի ավագանու որոշման հավելվածներում հավելվածի տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

Այս առումով հարկ ենք համարում ընդգծել, որ եթե ներկայացված նախագծերով կատարվում են բյուջեի եկամուտների կամ ծախսերի ավելացումներ կամ նվազեցումներ, ապա դրանց վերաբերյալ նախագծով առաջարկվող կարգավորումները չեն կարող ինկորպորացվել, այլ կերպ ասած՝ արտացոլվել հիմնական իրավական ակտում, այսինքն՝ տվյալ համայնքի բյուջեում, եթե տվյալ փոփոխությունները կամ լրացումները չկատարվեն տվյալ բյուջեն հաստատելու

վերաբերյալ որոշման հավելվածներում՝ ներկայացվող նախագծի հավելվածների տեսքով:

3. Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ շարադրվում են կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:*

Վերոգրյալ կարգավորումների համադրված և բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձաքննության ներկայացվող նորմատիվ իրավական ակտին կցվող հիմնավորման մեջ պարտադիր պետք է շարադրվեն կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը, կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը:

Այսինքն՝ համայնքների բյուջեներում կատարվող ցանկացած փոփոխության ժամանակ անհրաժեշտ է նախագծի հիմնավորման մեջ հստակ նշել, թե ինչ ուղղություններով և ինչ նպատակով են ավելացվում կամ նվազեցվում բյուջեի ծախսերը:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք ապահովել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջները և նախագծին կից ներկայացնել պատշաճ հիմնավորում:

ՀՀ ԱՆ իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝

Արդարադատության
Նախարարություն

10/28/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ